ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2021 թվականի N 11-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ. փետրվարի 25 -ի թիվ 02 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	—	—	—	բացակա
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե	—	—	—	բացակա
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	—		—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թ. փետրվարի 25 -ի թիվ 11 -Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

25 .02.2021թ. գ. Գյուլագարակ

1. *Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ փետրվարի 25-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:*
2. *ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2021թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին:*
3. *Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:*
4. *Հողի հարկի արտոնություններ կիրառելու մասին:*
5. *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու մասին:*
6. *Հողամասի նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին:*
7. *Գյուլագարակ համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունները հաստատելու մասին:*

Ընթացիկ հարցեր

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ /ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2021 թվականի N12-Ա

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.

Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2021թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային «Գյուլագարակ համայնքի Կուրթան, Վարդաբլուր, Գյուլագարակ, Գարգառ, Հոբարձի, Ամրակից բնակավայրերի համայնքային ճանապարհների ասֆալտապատում», «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ, Ամրակից, Պուշկինո բնակավայրերի չգազաֆիկացված թաղամասերի գազաֆիկացում» և «Գյուլագարակ համայնքի Կուրթան, Վարդաբլուր, Գյուլագարակ, Գարգառ, Հոբարձի, Ամրակից, Պուշկինո բնակավայրերի փողոցային լուսավորություն» հայտերին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	–	–	–	բացակա
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ		–	–	բացակա
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե		–	–	բացակա
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	–	–	–	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«25 » փետրվարի 2021 թվականի N 13 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից
   ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 01 հավելվածի,
   բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 02 հավելվածի.
   գ/ սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 03 հավելվածի:.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	—	—	—	բացակա
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե	—	—	—	բացակա
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Հավելված թիվ 01
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 25 -Ի թիվ 13-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն , Անուն	բնակավայր	Գումարի չափը/ՀՀ դրամ/
1	*Դավոյան Վահան*	*Հոբարծի*	*քսան հազար*
2	*Խանդամիրովա Մարիամ*	*Վարդաբլուր*	*քսան հազար*
3	*Պապոյան Խորեն*	*Վարդաբլուր*	*քսան հազար*
4	Բաբաջանյան Ենոք	Կուրթան	*քսան հազար*
5	Առաքելյան Արտյոմ	*Վարդաբլուր*	*քսան հազար*
6	Թորոսյան Տարոն	Կուրթան	*քսան հազար*
7	Խարազյան Արեգնազան	Կուրթան	*քսան հազար*
8	Անախասյան Գևորգ	Կուրթան	*քսան հազար*
9	Հակոբյան Օքսաննա	*Վարդաբլուր*	*քսան հազար*
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ			

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 02
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թվականի փետրվարի 25 -Ի թիվ 13--Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն	բնակավայր	գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Գոքորյան Դարինկա	Գյուլագարակ	երեսուն հազար
2	Վերմիշյան Խանում	Գյուլագարակ	երեսուն հազար
3	Մինասյան Սուսաննա	Գյուլագարակ	երեսուն հազար
4	Դավթյան Լավրենտ	Կուրթան	երեսուն հազար
5	Ղուկասյան Աիդա	Վարդաբլուր	երեսուն հազար
6	Մուսինյան Գարիկ	Գարգառ	երեսուն հազար
7	Ալեքսանյան Սմբատ	Գարգառ	երեսուն հազար
8	Զույկովա Յուլիա	Պուշկինո	երեսուն հազար
9	Խաչիկյան Վահան	Կուրթան	երեսուն հազար
10	Վարդանյան Գայանե	Վարդաբլուր	երեսուն հազար
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 300000 /ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ/ ՀՀ ԴՐԱՄ			

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 03
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թվականի փետրվարի 25-ի թիվ 13-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն	բնակավայր	գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Հակոբյան Հայարփի	Կուրթան	Հիսուն հազար
2	Հարությունյան Սամսոն	Կուրթան	Երեսուն հազար
3	Բաղդասարյան Աշոտ	Ամրակից	Քառասուն հազար
4	Հասանովա Օքսանա	Ամրակից	Երեսուն հազար
5	Այվազյան Տաթևիկ	Գյուլագարակ	Երեսուն հազար
6	Քալաշյան Խաչիկ	Գարգառ	Երեսուն հազար
7	Պետրոսյան Լիաննա	Պուշկինո	Երեսուն հազար
ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ			

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

« 25 » փետրվարի 2021 թվականի N14 -Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշումը, համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկի տույժերը զիջելու մասին, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Կիրառել հողի հարկի գոյացած տույժերի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակիչներին, ինչպես նաև հողի հարկի արտոնություն Արցախյան պատերազմում վիրավորված բնակչին, համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	–	–	–	բացակա
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ	–	–	–	բացակա
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե	–	–	–	բացակա
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	–	–	–	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Հավելված
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թ. փետրվարի 25 -ի թիվ 14-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	Հարկ վճարողի ազգանուն անուն	գույքի գրանցման հասցե	ՀՎՀՀ	Արտոնության տեսակը	Արտոնության գումարի չափը /դրամ/
1	Ջանջուղազյան Զոհրապ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Վարդաբլուր	18284849	Հողի հարկի տույժի	48763
2	Մինասյան Մնացական	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	18268836	Հողի հարկի տույժի	42368
3	Պառավյան Ռազմիկ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	18268999	Հողի հարկի տույժի	24944
4	Պառավյան Սարգիս	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	18344448	Հողի հարկի տույժի	55674
5	Ասրյան Խալաթ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Վարդաբլուր	18283124	Հողի հարկի տույժի	49232
6	Ազնավորյան Նինա	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Ամրակից	18280864	Հողի հարկի և տույժի	7415
7	Ազնավորյան Վլադիմիր	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Ամրակից	S0370865	Հողի հարկի և տույժի	54086
8	Ազնավորյան Դավիթ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Ամրակից	18281281	Հողի հարկի և տույժի	9388
9	Առաքելյան Աշոտ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18281832	Հողի հարկի տույժի	38305
10	Նիկողոսյան Սեդա	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18322988	Հողի հարկի տույժի	53890
11	Նիկողոսյան Էդուարդ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18283777	Հողի հարկի տույժի	38623
12	Կիրակոսյան Վարդանուշ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Ամրակից	18339001	Հողի հարկի տույժի	28205

Ընդամենը՝ 450893 ՀՀ դրամ:

Աշխատակազմի քարտուղար / Թ.Գրիգորյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2021 թվականի թիվ 15

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.

Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ-վաճառքով օտարելուն՝

1. 06-027-0193-0017 ծածկագրի 0.44170 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, այլ հողեր գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով մեկնարկային գինը 280000/երկու հարյուր ութսուն հազար / դրամ:
2. 06-029-0051-0016 ծածկագրից տարանջատված 0,0322 հա հողամասը, նպատակային նշանակությունը բնակավայրի, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով մեկնարկային գինը 110000/ մեկ հարյուր տասը հազար/ դրամ:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	–	–	–	բացակա է
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ	–	–	–	բացակա է
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե	–	–	–	բացակա է
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	–	–	–	բացակա է

Համայնքի ղեկավար /Մ. Գևորգյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 16

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով, որ հողամասի նկատմամբ գոյություն չունեն այլ անձանց պատկանելու վերաբերյալ որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, այն Հայաստանի Հանրապետության կառավարության 09.06.2005 թ. N 843 - ն որոշմամբ չի ընդգրկվել համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 59-րդ հոդվածներով, 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետով կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1.Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի սեփականություն հանդիսացող հողամասի հետ կապված անճշտությունների ուղղման համար Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-029-0010-0003 կադաստրային ծածկագրի 0,10446 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և միացնել համայնքի հողային ֆոնդին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	–	–	–	բացակա
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ	–	–	–	բացակա
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե	–	–	–	բացակա
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	–	–	–	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2021 թվականի թիվ 17-Ն

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն թիվ 01 հավելվածի:
2.Հաստատել 2020 թվականի համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն թիվ 02 հավելվածի:
3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ	—	—	—	բացակա
Թորոսյան Հրայր				
Լալազարյան Կարեն				
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել				
Մարիկյան Արմեն				
Մկրտումյան Խալաթ				
Մուրադյան Դավիթ				
Նալբանդյան Վահե	—	—	—	բացակա
Սարգսյան Աիդա				
Օհանյան Ստեփան	—	—	—	բացակա

Համայնքի ղեկավար /Մ. Գևորգյան/

Հավելված թիվ 02
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 25-ի թիվ 17-Ն որոշման

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 Թ-Ի ԿՏՐՎԱԾՔՈՎ

Գյուլագարակ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է 9 ծրագրերից, որոնք ունեն ծրագրային անձնագրեր: Այդ ծրագրերի մեծ մասը ունեն շարունակական բնույթ: 2020թ-ի ընթացքում հնարավոր է եղել հասնել արդյունքների:

Ծրագիր 1: Գյուլագարակ համայնքի կոմունալ ծառայություն: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 166 մլն դրամ: Ծրագիրը իրականացվել է 145 մլն դրամով: Համայնքային ներդրման մասը կազմել է 7200.000 դրամ: Ծրագիրը իրականացվել ՀՏԶՀ-ի հետ համատեղ և 2018թ-ին տարվա կտրվածքով ունեցել է ամենաբարձր միավորները Հայաստանում: Ծրագրով նախատեսված տեխնիկաներից մեկը առաքվել է 2018-ին, իսկ մյուսները առաքվել են 2019թ-ի: 2019 թ-ին համայնքում տեղադրվել է 100 աղբարկղ և աղբահանությանն իրականացվել է բարձր որակով: Հարթեցվել են համայնքային և դաշտամիջյան մեծ քանակությամբ ճանապարհներ: Թե տեխնիկայով, թե մարդկային գործոնի ներդրմամբ կատարվել են սանիտարական մաքրման ծավալուն աշխատանքներ: 2020 թվականի ընթացքում աղբարկղերի թիվը ավելացել է 32-ով: Աղբահանությունն իրականացվում է նոր որակով: Ծրագիրն ունի շարունակական բյնույթ և առաջ է շարժվում կանխատեսած մեծ հաջողություններով:

Ծրագիր 2: Գյուլագարակ համայնքի գիշերային լուսավորություն: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 28 մլն դրամ: 2018թ-ին տեղադրվել են 153 սյուներ և լեդ լուսատուներ: 2019թ-ի ընթացքում մեծ ծրագրեր չեն իրականացվել: Կատարվել է ընթացիկ նորոգման աշխատանքներ, վառված լուսատուները փոխարինվել են նորերով: 2020 թ-ին բնակավայրերում տեղադրվել են թվով 12 լուսատուներ և մեկ ֆոտովոլտային կայան Հոբարձիում: 2021-ին այս ծրագրով նախատեսվում են մեծ աշխատանքներ::

Ծրագիր 3: Ջուր Գարգառին: Ծրագրի բյուջեն նախնական եղել է 13 մլն դրամ: 2019 թ-ին կառուցվել է 3 կմ ջրագիծ, ինչը անհամեմատ ավելացրել է գյուղ հասնող ջրի քանակը, սակայն խնդիրը վերջնական լուծում չի ստացել: 2020թ-ին կատարվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ: Լայնածավալ աշխատանքներ են նախատեսվում նաև 2021 թ-ին:

Ծրագիր 4: Զբոսայգիների կառուցում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 1.7 մլն դրամ: 2018թ-ին այգիների կառուցման աշխատանքներ են սկսվել Պուշկինո և Ամրակից բնակավայրերում: Նշված այգիների կառուցումը նախատեսվում էր ավարտին հասցնել 2020թ-ին, սակայն ֆինանսական և աշխատանքային դժվարությունների պատճառով հնարավոր չի եղել ավարտին հասցնել ծրագրերը: 20

Ծրագիր 5: Համայնքի ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 40 մլն դրամ: 2019թ-ին համայնքի բոլոր բնակավայրերում կարատվել է գրունտային ճանապարհների նորոգման լայնածավալ աշխատանքներ: 2020 թ-ին

իրականացվել է համայնքային ճանապարհների ասֆալտապատման մեծ աշխատաքներ: Աշխատաքների արժեքը կազմել է 53 միլիոն դրամ: Ծրագիրը շարունակական է, մեծածավալ աշխատանքներ են նախատեսվում նաև առաջիկա տարիներին:

Ծրագիր 6: Կուրթանի և Վարդաբլուրի մշակույթի տների վերանորոգում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 22 մլն դրամ: Կուրթանի մշակույթի տան վերանորոգումը ավարտվել է 2019թ-ին: Վարդաբլուրի մշակույթի տան հատվածներով վերանորոգումը հնարավոր է եղել իրականացնել անհատ բարերարների միջոցներով: Վերջնական սպասելի արդյունք ունենալու համար դեռ կան անելիքներ:

Ծրագիր 7: Եկեղեցիների նորոգում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 10 մլն դրամ: 2020թ-ի բյուջեով ֆինանսական միջոցներ չեն առանձնացվել նշված ծրագրի համար:

Ծրագիր 8: Սպորտհրապարակների կառուցում: Ծրագրի բուջեն 6մլն դրամ է: 2019թ-ին մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ ձեռք է բերվել ցանկապատի ցանց Կուրթանի ֆուտբոլի դաշտի համար: 2020 թ-ին ՀՖՖ-ի միջոցնրով կառուցվել է նոր ֆուտբոլի դաշտ՝ 10 միլիոն դրամ արժողությամբ:

Ծրագիր 9: Անասնապահություն խթանում և արոտավայրերի բարեկարգում: Ծրագրի նախնական բյուջեն եղել է 6 մլն դրամ: 2018 թ-ից համայնքը սերտ համագործակցություն է սկսել ՌԶԳ ՀԿ-ի հետ, որի շրջանակներում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել համայնքում: Համայնքում տեղադրվել է անասունների 9 հատ 12 մետրանոց ջրախմոց, վերակառուցվել են հեռագնա արոտներ և սարեր տանող անանցանելի ճանապարհները: Ծրագրի իրականացմամբ հասանելի են դարձել մեծ քանակությամբ արոտավայրեր և թեթևացել են գերծանրաբեռնված արոտավայրերը: Լայնածավալ աշխատանքներ նախատեսվել էին նաև 2020 թ-ին, սակայն ՀԿ-ի ֆինանսավորման ժամանակավոր դադարեցման պատճառով դրանք տեղի չունեցան: 2021 թ-ի մասով արդեն կան նախնական պայմանավորվածություններ համատեղ աշխատանքները վերսկսելու համար:

Կազմեց՝ Վ. Այվազյանը
(093 93 04 26)